

միւսն ալ մեռցնելու աստիճան գանակոծել. նոյն տտեհները Հայոց Եկեղեցիին դրացի էին օրթօտոքս արար յոյներու և խափուներու եկեղեցիները. արար յոյներ հիմակ ալ տէրն են իրենց Ս. Պորփիւրոս եկեղեցիին, իսկ Գազայի մէջ խափուները հիմակ գոյութիւն չունին. հաւանաբար այս քրիստոնեաներն էին անոնք՝ որ Հայոց Եկեղեցին կոխելով կոտարած էին այդ խոշտանգումները:

Նոյն թղթածրարին մէջ կը գտնենք նաև ուրիշ անթուական նամակ մը ուղղեալ Եղիա վարդապետին, որուն ընծայուած յարգանքէն վերջ, նամակազիրը կը գրէ. «սոյն գրութեամբ կը յայտնեմ թէ մենք՝ ձեր տեսութեան կարօտ ենք և երկրորդ հոս գտնուող բոլոր անօթները ձեզ զրկած ենք, զայս ի գլտութիւն կը հաղորդենք. մուսլիմ Սալիմ»: Ըստ վերոգրելոյն զրկուած անօթներն են. «7 գիրք, մէկ սինի, զոյգ մը քնոց, երեք բռանիչ, մէկ սկիհ, չորս սաղաւարտ, հին վեղարներ, պղնձէ բուրվառ մը, որոնք սնտուկի մը մէջ գրուած են, վարագոյր, վարագոյր պատկերով, վարագոյր մանիչակագոյն, ծաղկեկարուած ժամարարի զգեստ. ամերիքանէ ժամարարի շապիկ մը, խասայէ ժամարարի շապիկ մը, երկու զգեստ տէնտէքի, սուփի մը մէջ երկու շուրջառ, մէկ փիլոն կանանչ, մէկ թւնոց, ծրարի մը մէջ ծրարուած թաւշեայ զգեստ, գօտիներ և այլն: ... Ասոնք զրինք տեղ մը և բանալին առինք: Միտք ունինք հայ ազգատին մէկը հոն պառկեցնել: Սոյն իրեղէնները ստանանիւզ իմացուցէք»:

Սալիմը կ'երևի թէ տեղւոյն ուսուցիչն էր. եկեղեցին անտէր ու անտիրական մնացած է ու յիշեալը ծանր կացութեան մը առջև գտնուելով՝ կը փակէ եկեղեցին ու անոր անօթները ցուցակով մը կը զրկէ Ս. Յակոբի վանքը, ինչպէս վերև տեսանք. հաւանական է որ եկեղեցին մինչև 1730 թուականը բաց էր և կանգուն, վասն զի Հաննէ կը գրէ իր Պատմութեան մէջ (էջ 293). «Սա ասի Ղազէ որ է Գազա: Աստ է տունն Սամփսոնի հզօրին և տուն Մագաղղինացոյն: Աս գոյ փանփ մի ազգիս Հայոց. և եկեղեցի յանուն Մրքոց Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միսայէլի: Եւ ունի պարսեզու և ծառս և խցերս: Չսա ասն լեալ տուն Իւարիոնի սրբոյ հօրն»: Հաննէի այս խօսքերուն մէջ փակումի և քանդումի խօսք չկայ: Իսկ Մկրտիչ Վրդ. Արծրունեան (էջ 248) Հաննէի վերևի տեղեկութիւնները տալէ վերջ կ'աւել-